ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՄՆԱԿՑԵՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը Հայաստանի կառավարական պատվիրակության հետ ժամանեց Հռոմ՝ մասնակցելու Ս. Պետրոսի Աթոռի 264-րդ ղահակալ Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի թաղման արարողությանը: Վեհափառ Հայրապետին օդանավակայանում դիմավորեց Վատիկանի բարձրաստիճան հոգևորականներից բաղկացած հատուկ հանձնախումբը և Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն աբեղա Շահինյանը:

Օդանավակայանից Նորին Սրբությանը ուղեկցեցին Վատիկանի Ս. Պետրոսի տաճար, ուր Նորին Սրբությունը աղոթք բարձրացրեց առ Աստված հանգուցյալ Պապի աճյունի առջև:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Ս. Պետրոսի տաճարում տեղի ունեցավ Ս. Պատարագի հատուկ արարողություն: Ըստ Կաթոլիկ Եկեղեցու ընդունված ավանդույթի, շուրջ երեքժամյա արարողության ընթացքում համապատարագում էին բոլոր 164 կարդինալները: Հռոմի Քահանայապետի թաղման արարողությունը նախագահում էր կարդինալների քոլեջի դեկան, Կարդինալ Յոզեֆ Ռացինգերը:

Արարողությանը ներկա էին քույր Եկեղեցիների առաջնորդներն ու ներկայացուցիչները, Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ը, Հունաստանի և Աթենքի Արքեպիսկոպոս Խրիստոդուլոսը, Ռուս Ուղղափառ Եկեղեցուց՝ միտրոպոլիտ Կիրիլը, և այլ բարձրաստիճան հոգևորականներ: Ներկա էին նաև շուրջ 200 երկրների նախագահներ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք և պատվիրակություններ:

Օրվա երկրորդ կեսին Վատիկան ժամանած Եկեղեցիների և քրիստոնեական միջազգային կազմակերպությունների պատվիրակություններին ողջունեց Կարդինալ Յոզեֆ Ռացինգերը:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետի հուղարկավորությանը մասնակցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Կ.Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Նարեկ եպս. Այեմեզյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն աբղ. Շահինյանը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիր Տ. Գեղարդ աբղ. Վահունին:

Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռ վերադարձավ ապրիլի 9-ին:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՌՈՄԻ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ